ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՍՍ-Ի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻՆ

Ամենայն Հայոց Հայրապետը, դեպի արտասահման Իր ուղևորության նախօրյակին, ընդունեց ՏԱՍՍ-ի գործակալության թղթակցին և արեց հետևյալ հայտարարությունը.

— Ապրիլի 16-ին կմեկնինք Մայր Աթոռից և կուղևորվինք դեպի արտասահման՝ հրավերով Վիեննայի և Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայ եկեղեցական իշխանությանց՝ նախագահելու համար նորակառույց եկեղեցիների օծման արարողություններին:

Վիեննայում ս. Հռիփսիմե եկեղեցու օծումը տեղի կունենա ապրիլի 21-ին, իսկ Նյու-Յորքի Մայր տաճարի օծումը՝ ապրիլի 28-ին:

Համաձայն Ամերիկայի հայոց եկեղեցու առաջնորդարանի նախագծած ծրագրի, Մենք պիտի այցելենք նաև մի շարք այլ հայաշատ քաղաքներ Միացյալ Նահանգաց մեջ, ինչպիսիք են՝ Վաշինգտոն, Բոստոն, Դետրոյտ, Չիկագո, Լոս-Անջելոս, Ֆրեզնո և Սան-Ֆրանցիսկո՝ տանելու համար մեր հավատացյալ ժողովուրդին Մեր օրհնությունը սուրբ Էջմիածնից և ողջույնը՝ մեր վերածնած մայր հայրենիքից:

Բնական է, թե պիտի հանդիպենք քույր եկեղեցիների բարձր ներկայացուցիչներին, և Մենք շատ ուրախ պիտի լինենք տանելու նրանց բոլորին Մեր եղբայրական ողջույնը, հայոց սուրբ գրական երկրից և քրիստոնեական հավատքի բազմադարյան մեր կենտրոնից:

Վերջին օրերս ստացանք նաև հրավեր Հարավային Ամերիկայի մեր եկեղեցական կենտրոնից՝ Բուենոս-Այրեսի հոգևոր իշխանության կողմից՝ այցելելու Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի հայ եկեղեցիները և հավատացյալները:

Մենք ընդունեցինք նաև այս հրավերը, ուրախ ենք, թե Մեր օրհնությունը պիտի բաշխենք նաև Հարավային Ամերիկայի Մեր հավատացյալ զավակներին:

Որպես հայ եկեղեցու գերագույն պետ կխորհենք, թե վերոհիշյալ Մեր ուղևորությունները երջանիկ պատեհություններ են, որպեսզի Է՛լ ավելի ամրապնդվի սփյուռքի հայության հոգևոր կապը իր պատմական միակ կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ և Է՛լ ավելի զորանա միության և միասնության գիտակցությունը մեր պանդուխտ ժողովուրդի կյանքի և գործունեության մեջ:

Մենք ուրախ պիտի լինենք, եթե Մեր այցելությունների և հանդիպումների առթիվ Մեր խոսքով և գործով կարողանանք նպաստել եկեղեցիների և ժողովուրդների միջև բարեկամության ու եղբայրության ոգու և աշխարհի խաղաղության դատի ամրապնդման: